

ՏԻՐՈՒՆԻ

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Տ. ՎԱՐԳԱՆ ՔԶՆՅ. ԱԻԱԳԵԱՆԻ

(1908 — 1973)

Միացեալ Նահանգներու Լորենս քաղաքին մէջ 9 նոյեմբերին իր մահ-
կանացուն կնքեց տեղւոյն հայ համայնքին հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վարդան
Քչնյ. Աւագան, վաթսունհինգ տարեկան հասակին :

Հանդուցեալը ծնած էր Պիթլիս 1908ին, աշխարհական անունով Ռա-
ֆայէլ : Տակաւին մանուկ, Մեծ Եղեռնի ընթացքին կը կորսնցնէ ծնողքն ու ըն-
տանիքի այլ պարագաները, եւ, երկար թափառումներէ ու տառապանքներէ
ետք իրբւ. Արարատեան որրանոցի սան Երուսաղէմ կու գայ 1922ին, ընդուն-
ուելով Ս. Աթոռիս Ժառանգաւորաց Վարժարան :

1925ին իրը դրաշար կը սկսի աշխատիլ Ս. Յակոբեանց Տպարանին
մէջ, ուր առաջին իսկ օրէն երեւան կու գան իր բարեխղճութիւնն ու փանտէր
ողին : Տպարանէն ներս իր պաշտօնավարութիւնը կը շարունակէ անխափան
մինչեւ 1951 : 1938ին կ'ամուսնանայ եւ նուիրեալ ու հոգածու հայր կ'ըլլայ իր
բազմանդամ ընտանիքին :

1951ին Կիպրոսի մէջ քահանայ կը ձեռնադրուի Լառնագայի ծուխին
միջոց. հոն կը պաշտօնավարէ մինչեւ 1957, երբ ընտանիքով կը մեկնի Միաց-
եալ Նահանգներ եւ կը հաստատուի Լորենս, իրբեւ հոգեւոր հովիւ : Այդ պաշ-
տօնը նուիրումով եւ հաւատքով կը վարէ մինչեւ իր վախճանումը :

Հանդուցեալը համեստ, գործունեայ եւ հաւատացեալ անձ մըն էր,
միշտ իր պարտականութիւններուն դիտակից, պարտաճանաչ եւ օգտակար ե-
ղող :

Կ'աղօթենք իր հոգիի խաղաղութեան համար, եւ Ս. Հոգիին միւրթա-
բութիւնը կը հայցենք իր ընտանիքի անդամներուն, ինչպէս նաեւ Լորենսի հայ
համայնքի բոլոր ծխականներուն :